

ՈՐՈՇՈՒՄ

ԵԹԿՊԻ-ի ռեկտորատի 2016թ. նոյեմբերի 1-ի

նիստի /արձանագրություն N 5/

1. 2015-2016 ուս. տարվա II կիսամյակի քննաշրջանի արդյունքները համարել բավարար,

1.1. հանձնարարել դեկաններին այսուհետ առաջադիմության վերաբերյալ

հաշվետվությունը ներկայացնել համեմատական վերլուծության ձևով,

1.2. 2016-2017 ուս. տարվա I կիսամյակի միջանկյալ քննությունների ընթացքի

վերաբերյալ դեկանների զեկույցներն ընդունել ի գիտություն,

1.3. ուսումնական գործընթացը բարելավելու նպատակով հանձնարարել ամբիոններին՝

1.3.1. վերանայել առարկայական ծրագրերը, հանձնարարվող գրականության ցանկերի

ծավալները, սահմանել գնահատման հստակ չափանիշներ,

1.4. հանձնարարել դեկաններին առաջին կիսամյակի միջանկյալ քննությունների

ընթացքում դիտարկված թերությունները քննարկել կուրսերի ղեկավարների հետ,

1.5. Կիսամյակային քննություններին մասնակից դարձնել ՈԱԿ-ի աշխատակիցներին և որակի հանձնախմբի անդամներին:

2. Ուսման վարձերի հավաքագրման ընթացքի վերաբերյալ Հ. Նալբանդյանի զեկույցն ընդունել ի գիտություն,

2.1. 2016-2017 ուս. տարվա I կիսամյակի ուսման վարձը վճարելու համար Արվեստի պատմության, տեսության և կառավարման I կուրսի ուսանողուհի Միլենա Բալդրյանին տալ եռօրյա ժամկետ: Կատարման վերահսկողությունը հանձնարարել ֆակուլտետի ղեկան Ա. Հարությունյանին:

3. Հիմք ընդունելով ԵԹԿՊԻ-ի Վանաձորի մասնաճյուղի տնօրենի զեկուցագիրը՝

3.1. ԵԹԿՊԻ-ի Վանաձորի մասնաճյուղի ուսման վճարովի համակարգում սովորող ներքոհիշյալ ուսանողների 2016-2017 ուս. տարվա I կիսամյակի ուսման վարձը զեղչել հետևյալ չափերով՝

1. Մարուքյան Արևիկ Նիկոլի (դեր. II կուրս) – 30 %

2. Հախոյան Սյուզաննա Սեյրանի (դեր. III կուրս) – 50 %

3.2. ԵԹԿՊԻ-ի Վանաձորի մասնաճյուղի դերասանական II կուրսի ուսանողուհի Նոնա Սպարտակի Սաֆարյանին հատկացնել դրամական օգնություն 50 000 (հիսուն հազար) դրամի չափով:

4. Հիմք ընդունելով ԵԹԿՊԻ-ի Գյումրու մասնաճյուղի տնօրենի զեկուցագիրը՝

4.1. ԵԹԿՊԻ-ի Գյումրու մասնաճյուղի ուսման վճարովի համակարգում սովորող ներքոհիշյալ ուսանողների 2016-2017 ուս. տարվա I կիսամյակի ուսման վարձը զեղչել հետևյալ չափերով՝

1. Խաչատրյան Արաքսյա Արայի (դեր. II կուրս) – 50 %

2. Էլբակյան Լուսինե Գագիկի (ռեժ. II կուրս) – 30 %

3. Մուրադյան Մուրադ Հարությունի (դեր. II կուրս) – 50 %

4.2. ԵԹԿՊԻ-ի Գյումրու մասնաճյուղի ուսման վճարովի համակարգում սովորող ներքոհիշյալ ուսանողներին հատկացնել դրամական օգնություն հետևյալ չափով՝

1. Ղազարյան Անի Ավետիսի (հեռուստառեժիսուրա IV կուրս)-70 000 (յոթանասուն հազար) դրամ

2. Հովհաննիսյան Անահիտ Տիգրանի (հեռուստառեժիսուրա IV կուրս)-70 000 (յոթանասուն հազար) դրամ

3. Դանիելյան Գոհար Սաշիկի (դեր. III կուրս) -70 000 (յոթանասուն հազար) դրամ

5. Հանձնարարել ֆակուլտետների ղեկաններին կազմակերպել և վերահսկել 2017թ. ընդունելության ծրագրերի և գնահատման չափանիշների վերանայման, խմբագրման աշխատանքները:

6. Հանձնարարել իրավախորհրդատու Է. Մանասերյանին մշակել և ԳԽ քննարկմանը ներկայացնել պրոֆեսորադասախոսական կազմի հաճախելիությունը և գործուղումները կանոնակարգող փաստաթղթի նախագիծ:

7. Հ. Պարոնյանի անվան պետական երաժշտական թատրոնի հոբելյանի կապակցությամբ՝ թատրոնին նվիրել ինստիտուտի բեմանկարչության բաժնի շրջանավարտների աշխատանքներից մեկը և հանձնարարել պրոռեկտոր Ն. Սարգսյանին՝ պատրաստել ողջույնի խոսքի տեքստը:

8. Ս.թ. նոյեմբերի 7-ին ռեժիսոր- մուլտիպլիկատոր Գարրի Բարդինի հետ ԵԹԿՊԻ-ում կայանալիք հանդիպումը լուսաբանելու նպատակով հանձնարարել հանրային կապերի և տեղեկատվության կենտրոնի համակարգող Է. Բարսեղյանին ապահովել ՁԼՄ-ների ներկայությունը:

9. «Լավագույն ուսանող» մրցույթի ներբուհական փուլի արդյունքում հաղթած դերասանական IV կուրսի ուսանողուհի Մարիետա Դովլաթբեկյանին ներկայացնել մասնակցելու վերոհիշյալ մրցույթի II՝ միջբուհական փուլին:

Գիտքարտուղար

Գ. Հովհաննիսյան